ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

01-ը հունիսի 2025թ.

ՈՒՂԵՐՁ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի՝

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Այսօր նշում ենք Հունիսի 1-ը՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը. տոնի խորհրդին համահունչ առաջնահերթ ուզում եմ նշել, որ իմ անմիջական հետևողականությամբ Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժինը, սոցիալական ծրագրերի առողջապահության և տեղեկատվության բաժինը, համայնքային ենթակայության կազմակերպությունները ի շահ համայնքի երեխաների իրականացնում են տարաբնույթ ծրագրեր՝ անհատական մոտեցում ցուցաբերելով խոցելի խմբերի երեխաներին:

Սիրելի՛ երեխաներ.

Հունիսմեկյան պայծառ տոնի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ ձեզ. բոլորիս ցանկությունն է, որ միշտ լինեք պաշտպանված, սիրված, ապրեք ջերմությամբ ու հոգատարությամբ լի միջավայրում:

Հայ ընտանիքներում երեխաները, նրանց նկատմամբ սերն ու խնամքը առանձնահատուկ տեղ ունեն, ուստի շնորհավորում եմ բոլոր ծնողներին, որոնք անում են առավելագույնը երեխաների համար անհոգ ու լիարժեք մանկություն ապահովելու ուղղությամբ:

Աբովյան համայնքի սիրելի՛ փոքրիկներ.

Տարվա ամենալուսավոր և ուրախ տոնի կապակցությամբ կրկին շնորհավորում եմ բոլորիդ, մաղթում եմ, որ միշտ լինեք առողջ ու երջանիկ, վայելեք հիշարժան ու հեքիաթային մանկություն, մեծանաք խաղաղ և հզոր հայրենիքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ